

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐ ԶՈՎԻ» ՍՊԸ


2024թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

Ցուցանիշի անվանումը Շարունակվող գործունեությունից	Ծնթգ	հազար դրամ	
		31.12.2024թ.	31.12.2023թ.
Հասույթ	4,1	58 584 876	58 965 672
Վաճառքի ինքնարժեք	4,2	48 249 695	-49 723 534
Համախառն շահույթ (վնաս)		10 335 181	9 242 138
Այլ եկամուտներ	4,3	36 332	10 737
Վարչական ծախսեր	4,4	-5 408 472	-818 237
Այլ ծախսեր	4,5	-3 427 766	-16 920 658
Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս	4,5	-33 534	30 191
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		1 501 741	-8 455 829
Շահութահարկի գծով ծախս	4,6	-481 702	-445 813
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		1 020 039	-8 901 642
Ընդհատված գործունեության գուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		1 020 039	-8 901 642
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		1 020 039	-8 901 642

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025 թվականի հունիսի 4-ին

Տնօրեն

Ռ. Ալիսանյ



Լիազոր անձ

Վ. Գրիգորյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		հազար դրամ	
ՄԿՏԻՎ	ծնթց	31.12.2024թ.	31.12.2023թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4,7	775 908	717 529
Ֆինանսական վարձակալության գծով ստացվող համախառն մուտքեր		11 650	0
Հետաձգված հարկային ակտիվ		13 151	19 096
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		800 709	736 625
2. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4,8	4 000 555	3 608 924
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,9	1 111 916	1 419 149
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար		0	
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,10	1 227 560	989 730
Այլ ընթացիկ ակտիվներ			
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		6 340 031	6 017 803
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԿՏԻՎՆԵՐ		7 140 740	6 754 428
ՊԱՍԻՎ			
1. Մեփական կապիտալ			
Գանտնադրական (բաժնետիրական) կապիտալի գումար	4,11	253 112	253 112
Էմիսիոն եկամուտ			
Գուտակված շահույթ		-2 201 410	-3 245 651
Մեփական կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը սեփական կապիտալ		-1 948 298	-2 992 539
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ			0
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումար	4,12	12 071	0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		12 071	0
3. Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	4,12	3 119 236	3 182 445
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,13	5 884 673	6 457 268
Շահութահարկի գծով պարտավորություն			
Պահուստներ	4,14	73 058	107 254
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		9 076 967	9 746 967
Օտարման խմբում ներառված որպես վաճառքի համար դասակարգված պարտավորություններ			
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		7 140 740	6 754 428

ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Տնօրեն

Լիազոր անձ

[Handwritten signature]

Ռ. Ալիխանով

Վ. Գրիգորյան

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Նոր Զովք» ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)

Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Կուտակված շահույթ (վնաս)	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
253 112		5 655 991		5 909 103

Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.

Հաշվապահական հաշվառման քաղաքականության
փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական
սխալների ճշգրտումը

Վերահաշվարկված մնացորդը

253 112		5 655 991		5 909 103
		(8 901 642)		(8 901 642)

Հաշվետու տարվա շահույթ կամ վնաս

Ներքին տեղաշարժ

Սեփական կապիտալի հետ այլ գործարքներ

Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.

253 112		(3 245 651)		(2 992 539)
---------	--	-------------	--	-------------

II. Ընթացիկ տարի (ժամանակաշրջան)

253 112		(3 245 651)		(2 992 539)
---------	--	-------------	--	-------------

Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.

(վերաներկայացված)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության
փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական
սխալների ճշգրտումը

Վերահաշվարկված մնացորդը

253 112		(3 221 449)		(2 968 337)
		1 020 039		1 020 039

Հաշվետու տարվա շահույթ կամ վնաս


Ներքին տեղաշարժ

Սեփական կապիտալի հետ գործարքներ

Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.

253 112		(2 201 410)		(1 948 298)
---------	--	-------------	--	-------------

24 202



Տնօրեն

Լիազոր անձ

Ռ. Ալիխանով

Կ. Գրիգորյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Նոր Զովք» ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Հոդվածի անվանումը

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների,
ծառայությունների իրացումից մուտքեր
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր
Ընդամենը մուտքեր

Նյութերի, ապրանքների ձեռք բերման, աշխատանքների
կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անուսից
Վճարումներ բյուջե
Վճարումներ վարձակալության գծով
Գործառնական այլ գործունեությունից ելքեր
Ընդամենը ելքեր

Գործառնական գործունեությունից դրամական միջոցների
զուտ հոսքեր

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների
հոսքեր

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների
մուտքեր

Ֆինանսական ներդրումներից եկամուտներ
Տրամադրված փոխառությունից
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների
ելքեր

Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք
բերման գծով
Տրամադրված փոխառությունից
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ
հոսքեր

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների
հոսքեր

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների
մուտքեր

Ստացված վարկերից և փոխառություններից
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր

Ստացված վարկերի և փոխառությունների մարումից
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ
հոսքեր

Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին

31.12.2024թ.

31.12.2023թ.

61 937 463

67 924 635

6 152 376

828

68 089 839

67 925 463

-59 813 540

-59 971 477

-2 695 837

-2 170 354

-3 889 646

-6 139 288

-945 544

-911 863

-76 215

-319 431

-67 420 782

-69 512 413

669 057

-1 586 950

0

0

-335 047

-220 376

-335 047

-220 376

-335 047

-220 376

406 500

3 139 212

406 500

3 139 212

-499 536

-627 036

-499 536

-627 036

-93 036

2 512 176

240 974

704 850

-3 144

2 050

989 730

282 830

1 227 560

989 730

Ռ. Ալիսանով

Վ. Գրիգորյան

Լիազոր անձ



Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284
Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ
հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է

«Նոր Զովք» ՍՊԸ

ղեկավարությանը

Կարծիքից հրաժարում

Մենք ներգրավվել ենք իրականացնելու «Նոր Զովք» ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մենք չենք արտահայտում կարծիք Ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր եզրակացության «Կարծիքից հրաժարման հիմք» բաժնում նկարագրված հարցի նշանակալիության պատճառով մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ այս ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի հիմք ապահովելու համար:

Կարծիքից հրաժարման հիմք

1. Մենք չենք նշանակվել որպես Ընկերության աուդիտորներ նախքան 202 թվականի դեկտեմբերի 31-ը, ուստի չենք դիտել պաշարների գույքագրումը այդ տարվա սկզբի և վերջի դրությամբ: Մենք չենք կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ համոզվել 2023 և 2024 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների վերաբերյալ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 3 608 924 հազար դրամ և 4 000 555 հազար դրամ գումարներով, համապատասխանաբար:

2. Բացի դրանից, 2023 թվականի սեպտեմբեր ամսին հաշվապահական առևտրային նոր ծրագրի ներդրման արդյունքում առաջացել են որոշ անճշտություններ պաշարների անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների միջև կապված 31.12.2023 թվականի դրությամբ մնացորդների հետ:

Մեր եզրակացության ամսաթվի դրությամբ, Ընկերության ղեկավարությունը գտնվում էր այդ համակարգչային թերությունների շտկման և անճշտությունների ճշտման փուլում:

3. Մենք անկարող էինք այլընտրանքային միջոցների կիրառմամբ հաստատել կամ ստուգել 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 111 916 հազար դրամ (հաստատվել է 20%-ը) և 5 884 673 հազար դրամ (հաստատվել է 26%-ը) գումարներով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտքերի գումարները: Նշված հարցերի արդյունքում, մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեն կատարել պաշարների, դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտքերի արտացոլված և չարտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների տարրերի ճշգրտումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և՛ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքի պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի՝ ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

25 հունիսի, 2025 թ.

Տնօրեն-բաժնետեր, տ.գ.թ./առաջադրանքի ղեկավար՝

Աղավնի Բաբայան

